ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՖԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 55 - 56 (16251) ՇԱԲԱԹ, 12 ՀՈՒԼԻՍԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՐԱԳԱՅՆԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ»

Հուլիսի 11-ին Բաթումիում աշխատանքն սկսեց «Վրաստանի եվրոպական ուղի» միջազգային 11-րդ խորհրդաժողովը: Այն ներածական խոսքով բացեց եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցերով Վրաստանի պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին:

Խորհրդաժողովի աշխատանքին մասնակցում են Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, Լեհաստանի սենատի խոսնակ Բոգդան Բորուսեւիչը, Եվրամիության անդամ երկրների, Վրաստանի քաղաքացիական եւ գործարար շրջանների ներկայացուցիչները:

Ելույթ ունենալով խորհրդաժողովին՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ սույն խորհրդաժողովն առաջինն է Ասոցիացման համաձայնագրի ստորագրումից հետո: «Ասոցիացման համաձայնագրի ստորագրումը նոր հնարավորություն է բացում Եվրամիության եւ Վրաստանի միջեւ հարաբերություններում: Վրաստանի կառավարությունը հաստատակամորեն

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ԱԼՅԱՆՍԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՎԱՉԱՓ

Հուլիսի 9-ին, երկօրյա պաշտոնական այցով, Թբիլիսի ժամանեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապաթուրայը:

Այցի շրջանակներում, ալյանսի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիայի, արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեի, ներքին գործերի նախարար Ալեքսանդր Ճիկաիձեի, եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման հարցերով պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլու հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվեցին Վրաստանի եվրատլանյան ինտեգրացման հետ կապված գործընթացները եւ ՆԱՏՕ-ի՝ Ուելսի գագաթաժողովի նախապատրաստումը:

«Ես ժամանել եմ գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ, որպեսզի վրացական կողմի հետ միասին աշխատենք միջոցառումների նոր փաթեթի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿՎԱՎԵՐԱՑՎԻ ՀՈՒԼԻՍԻ 18-ԻՆ

Եվրամիության հետ Վրաստանի Ասոցիացման համաձայնագիրը երկրի խորհրդարանը կվավերացնի հուլիսի 18-ին, իր արտահերթ նիստում: Այդ մասին հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին:

Նրա խոսքերով, «Վրաստանի սահմանադրության պահանջներին համապատասխան, առաջիկա օրերին ինքը կդիմի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլուն խորհրդարանի արտահերթ նիստ հրավիրելու խնդրանքով»:

Այժմ Վրաստանի խորհրդարանն արձակուրդում է. գարնանային նստաշրջանն ավարտվել է հունիսի վերջին: Սահմանադրությանը համապատասխան, Վրաստանի նախագահն իրավունք ունի արտահերթ նիստ գումարել կարեւոր օրինագծեր եւ համաձայնագրեր քննարկելու ու հաստատելու համար:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏՈՒՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՎԵԼ Է 1715514 ԸՆՏՐՈՂ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեղեկատվությամբ, հուլիսի 12-ին ինքնակառավարման 8 քաղաքներում եւ 13 մունիցիպալիտետներում անցկացվելիք տեղական ընտրությունների երկրորդ տուրի համար գրանցվել է 1715514 ընտրող:

ԿԸՀ-ի տվյալներով, ընդհանուր առմամբ, տպագրվելու է 1605000 քվեաթերթիկ, որից 1191450-ը առնչվելու է քաղաքապետերի, իսկ 413550-ը (5050-ը՝ ադրբեջաներեն) մունիցիպալիտետների վարչության նախագահի ընտրությանը:

Ինչպես հայտարարեց ԿԸՀ մամլո խոսնակ Եկատերինե Ազարաշվիլին, ընտրությունների մոնիտորինգը կանցկացնեն ԿԸՀ-ում գրանցված դիտորդական կազմակերպություններն ու լրատվամիջոցները:

(Խորագրի շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ԵՐԿՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԸ

ՀՐԱԺԵՇՏ ՄԻ ՈՂՋ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ

Հուլիսի 7-ին, 86 տարեկան հասակում, վախճանվեց Վրաստանի նախկին նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն: Նրա հետ միասին անցյալի գիրկն անցավ Վրաստանի նորագույն պատմության ողջ դարաշրջանը: Թեպետ շատերի համար դա սովորական պատմություն չէ, այլ կյանքի, այն էլ բավականին տեւական կյանքի հատված:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հանձնարարությամբ, ստեղծվել է Վրաստանի երկրորդ նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հուղարկավորության պետական հանձնաժողով: Հուղարկավորության ծախսերը եւ կազմակերպչական բոլոր հարցերն ամբողջությամբ իր վրա է վերցրել պետությունը: Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Էդուարդ Շեւարդնաձեի մահվան կապակցությամբ խորին ցավակցություն է հայտնել հանգուցյալի հարազատներին: Նրա հայտարարությամբ, «Էդուարդ Շեւարդնաձեն 20-րդ դարի նշանավոր քաղաքական գործիչ էր, որն անմիջականորեն մասնակցեց խորհրդային համակարգի փլուզմանը: Նա այն քաղաքագետն է, ում անունը սերտորեն կապված է Եվրոպայում պատի փլուզման ու Նոր Եվրոպայի ձեւավորման հետ: Բնականաբար, նա նշանակալի դեր կատարեց Նոր Վրաստանի կազմավորման ու երկրի արեւմտյան կուրսի զարգացման գործում»:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին երկրի նախկին նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի մահվան կապակցությամբ ցավակցություն է հայտնել նրա ընտանիքին ու մերձավորներին:

«Ցավակցություն եմ հայտնում Վրաստանի նախկին նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի մահվան կապակցությամբ: Հատկապես կարեւոր է Էդուարդ Շեւարդնաձեի ներդրումն արդի աշխարհում, Վրաստանի աշխարհաքաղաքական դերի ձեւավորման մեջ»,- ասված է վարչապետի հայտարարության մեջ: Նրա խոսքով, Շեւարդնաձեն միջազգային նշանակության քաղաքական գործիչ էր, ով մեծ ավանդ է ներդրել «սառը պատերազմի» ավարտման եւ նոր աշխարհակարգի ձեւավորման գործում: Մեծ է նաեւ նրա ներդրումը հայ-վրացական բազմաբնույթ հարաբերությունների ամրապնդման գործում:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԾԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ցավակցական հեռագիր է հղել Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլուն՝ հանրահայտ քաղաքական ու պետական գործիչ էդուարդ Շեւարդնաձեի մահվան կապակցությամբ:

Հեռագրում ասված է. «Էդուարդ Շեւարդնաձեն իրավամբ նշանակալի դերակատարում է ունեցել ոչ միայն անկախ Վրաստանի կայացման ու ամրապնդման գործում, այլ նաեւ նոր աշխարհակարգի ձեւավորման գործում: Մեծ է նաեւ նրա ներդրումը հայ-վրացական բազմաբնույթ հարաբերությունների ամրապնդման գործում:

Խորին ցավակցություն եմ հայտնում Ձեզ եւ Վրաստանի բարեկամ ժողովրդին, ինչպես նաեւ սփոփանքի ու զորակցության խոսքեր հղում՝ հանգուցյալ էդուարդ Շեւարդնաձեի հարազատներին ու մտերիմներին»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԱՍՆԱԿՑԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի երկրորդ նախագահ էդուարդ Շեւարդնաձեի հուղարկավարությանը, այլ պատվիրակությունների հետ միասին, կմասնակցի նաեւ Հայաստանի պատվիրակությունը՝ Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում են Հայաստանի արդարադատության նախարար, Վրաստանում Հայաստանի նախկին արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը, Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վարդան Այվազյանը, Վրաստանում Հայաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Վահագն Աֆյանը:

Վրաստանի երկրորդ նախագահ էդուարդ Շեւարդնաձեի մահվան կապակցությամբ ցավակցական հեռագրեր են առաքել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, Էստոնիայի նախագահ Թոմաս Իլվեսը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, ԱՄՆ նախկին պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը:

Վրաստանի երկրորդ նախագահի մահվան կապակցությամբ Շեւարդնաձեի ընտանիքին իրենց ցավակցությունն են հղել Հենզել Մկոյանը, Տաճատ Վարդապետյանը, Ֆերդինանդ Ալեքսանյանը, Սերգեյ Դարբինյանը, Ռաֆիկ Արզումանյանը, Ստեփան Ստեփանյանը, Առուշան Հակոբյանը:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ԱԼՅԱՆՍԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՎԱՉԱՓ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վրա: Այժմ մենք պետք է մանրամասներ քննարկենք նախարարների հետ միասին: Ես վստահ եմ, որ դաշինքի գագաթաժողովում վկաները կդառնանք այնպիսի որոշումների, որոնց կհետեւի ՆԱՏՕ-ի ավելի ակտիվ մասնակցությունը Վրաստանի կյանքին, ինչպես նաեւ վրացիների ակտիվ մասնակցությունը դաշինքի բանավեճերին ու ծրագրերին: Դրանով կշարունակվի Վրաստանի՝ դեպի դաշինք տանող ուղին»,- Վրաստանի ԱԳ նախարարությունում կայացած հանդիպումից հետո հայտարարեց Ջեյմս Ապաթուրայը:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Հարավային Կովկասում ու Կենտրոնական Ասիայի ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապաթուրայի հանդիպմանը կողմերը քննարկեցին ալյանսի՝ Ուելսի գագաթաժողովի նախապատրաստության ընթացքը: Վրաստանի նախագահը կրկին անգամ հավաստեց, որ ինքը կմասնակցի ՆԱՏՕ-ի գագաթաժողովին: Վրաստանի հետ ալյանսի համագործակցության հատուկ ծրարի հետ առնչվող հարցերը հանդիպման գլխավոր թեմաներից էին:

Հուլիսի 9-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ Հարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայի ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապաթուրայի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին ալյանսի հետ համագործակցության նոր ծրարի հետ առնչվող հարցեր:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԱՏՕ-Ի ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ ՆԱՏՕ-ի անդամ երկրների՝ Վրաստանում հավատարմագրված դեսպանների հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին ալյանսի ուելսյան գագաթաժողովի նախապատրաստության հարցը եւ հույս հայտնեցին, որ գագաթաժողովին արժանվույն գնահատական կտրվի եվրատլանտյան կառույցների ինտեգրման ճանապարհին Վրաստանի ձեռք բերած առաջընթացին:

Դիվանագետները Գիորգի Մարգվելաշվիլուն շնորհավորեցին Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրման կապակցությամբ:

Հանդիպմանը անդրադարձ կատարվեց նաեւ տարածաշրջանային անվտանգության եւ Ուկրաինայի իրադարձությունների հարցին:

Վրաստանի նախագահը ՆԱՏՕ-ի անդամ երկրների դեսպաններին շնորհակալություն հայտնեց եվրատլանտյան եւ եվրոպական կառույցներին ինտեգրման գործընթացում Վրաստանին ցուցաբերած աջակցության համար:

Աշխատանքային ճաշի ձեւաչափով նախագահական նստավայրում անցկացված հանդիպմանը ներկա էր 17 երկրի դեսպան:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՐԱԳԱՅՆԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որոշել է արագացնել Եվրամիության հետ ինտեգրման օրակարգով նախատեսված բարեփոխումները: Բարեփոխումները նախատեսում են մերձեցում Եվրամիությանը եւ տնտեսական աստիճանական ինտեգրում, ինչն է՝լ ավելի անշրջելի կդարձնի Վրաստանի եվրոպացման գործընթացը»,- ընդգծեց վարչապետը:

Իրակլի Ղարիբաշվիլու հավաստմամբ, իր գլխավորած կառավարությունը տնտեսական քաղաքականությունը նպատակաուղղված է ազատ, արդարացի եւ կայուն զարգացման ուղղությամբ: Այն հենվում է այնպիսի հիմնարար սկզբունքների վրա, ինչպիսիք են տնտեսական ազատությունը, մասնավոր սեփականության պաշտպանությունն ու սոցիալական արդարությունը: «Ցանկանում եմ ընդգծել, որ Վրաստանի կառավարությունը հնարավոր ամեն ինչ կանի բոլոր այն բարեփոխումների կատարման համար, որոնք մեզ է՝լ ավելի կմերձեցնեն Եվրոպային: Այդ ամենը մենք ընկալում ենք որպես երկրի արդիականացման արագ գործընթաց»,- խորհրդաժողովում հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՐԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃ

Հուլիսի 9-ին, Թբիլիսիի «Շերաթոն Մետեխի պալաս» հյուրանոցում, անցկացվեց Թբիլիսիի քաղաքապետի ընտրությունների երկրորդ տուրի մասնակից թեկնածուների՝ «Վրացական երազանք» կոալիցիայի ներկայացուցիչ Դավիթ Նարմանիայի եւ «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչ Նիկա Մելիայի հեռուստաբանավեճը:

Հիշեցնենք, որ ընտրությունների առաջին տուրում կառավարող կոալիցիայի ներկայացուցիչն ստացել է քվեների 46,4 տոկոսը, իսկ նրա մասնակիցը՝ 27,2 տոկոսը: Բանավեճի թեկնածուները ներկայացրին իրենց գործողության ծրագիրը՝ հիմնական շեշտը դնելով սոցիալական հարցերի վրա: Մասնավորապես, Դավիթ Նարմանիան հայտարարեց, որ, քաղաքապետի պաշտոնում ընտրվելու դեպքում, իրենք կկրկնապատկեն կոմունալ վաուչերները, իսկ սոցիալապես անպաշտպան քաղաքացիները 250-ի դիմաց կստանան 500 լարիի վաուչեր: Նրա խոսքերով, առանձնակի ուշադրություն կհատկացվի նաեւ ժողովրդագրական հիմնախնդրի վրա, եւ յուրաքանչյուր երրորդ երեխայի համար ընտանիքը կստանա 500, չորրորդի համար՝ 1000 եւ հինգերորդ ու հաջորդ երեխաների համար 1500 լարիի նպաստ:

Նիկա Մելիան, քաղաքապետի պաշտոնում ընտրվելու դեպքում, խոստացավ նշանակալիորեն նվազեցնել կոմունալ սպասարկումների սակագները եւ մունիցիպալային տրանսպորտի ուղեւորավարձը:

Հեռուստաբանավեճի ընթացքում Դավիթ Նարմանիան ու Նիկա Մելիան փոխանակեցին ընտրողներին տրված եւ կատարած ու չկատարած խոստումների ցուցակները: Նարմանիան ազգային շարժման ներկայացուցչին հանձնեց գրքույկ, որտեղ նշված էր, թե ինչ է արվել նախկին իշխանության օրոք, եւ ինչ է արվում ներկայումս: Իր հերթին, Նիկա Մելիան ներկայացրեց կառավարող կոալիցիայի խոստումների ցուցակը, որը նրա հավաստմամբ մնացել է անկատար:



ՈՒԿՐԱԻՆԱ

ԱՃՈՒՄ Է ՁՈՀԵՐԻ ԹԻՎԸ

Ուկրաինայի Դոնեցկի ու Լուգանսկի մարզերում իրականացվող ուժային գործողությունների ընթացքում զոհվել է 478 քաղաքացիական անձ: Այդ մասին հայտարարել է Ուկրաինայի առողջապահության փոխնախարար Վասիլի Լազորիշինեցը:

«Քաղաքացիական բնակչության շրջանում կորուստները, ցավոք, ավելի մեծ են զինվորականների կորուստներից: Ուկրաինայի արեւելքում գործողության անցկացման գոտու քաղաքացիական բնակչության թվից զոհվել է 478 մարդ, ներառյալ՝ 30 կին եւ յոթ երեխա: Դրա հետ մեկտեղ, վիրավորվել է 1392 մարդ, ներառյալ՝ 104 կին եւ 14 երեխա»,- հայտնել է նա:

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը եւ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը հեռախոսազրույցի ընթացքում հանդես են եկել Ուկրաինայում շուտափույթ հրադադար հաստատելու եւ երկրի արեւելքի իրադրության շուրջ շփման խմբի հանդիպում անցկացնելու օգտին:

ԹՈՒՐՔԻԱ

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ

Թուրքիայի Resmi պաշտոնական թերթը հրապարակել է 2014 թվականի օգոստոսի 10-ին անցկացվելիք հերթական նախագահական ընտրություններում առաջադրված թեկնածուների պաշտոնական ցուցակը, որը ներկայացրել է Թուրքիայի կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Թուրքիայի նախագահի պաշտոնում ընտրվելու համար թեկնածու է առաջադրվել գործող վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանը՝ իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունից, էքմելեդդին Մեհմեթ Իհսանօղլուն՝ ընդդիմության միասնական թեկնածու (Ժողովրդահանրապետական կուսակցություն ու «Ազգայնական շարժում» կուսակցություն) եւ ազգությամբ քուրդ Սելահեթդին Դեմիրթաշը՝ «Ժողովուրդների դեմոկրատական կուսակցություն»-ից:

Առաջիկա նախագահական ընտրություններում Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ երկրի նախագահը պետք է ընտրվի 5 տարի պաշտոնավարման ժամկետով, համաժողովրդական քվերակության միջոցով: Մինչեւ այժմ Թուրքիայի նախագահն ընտրվում էր խորհրդարանի կողմից 7 տարի պաշտոնավարման ժամկետով:

Նշվում է, որ եթե առաջին փուլում թեկնածուներից ոչ մեկը չհավաքի ընտրողների 50 տոկոսից ավելին, ապա երկրորդ փուլը կանցկացվի օգոստոսի 24-ին:

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ԵՐԿՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԸ

ՀՐԱԺԵՇՏ ՄԻ ՈՂՋ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գի հաստատման գործում»:

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին իր ցավակցական ուղերձում նշել էր. «Ցավալի է, որ վախճանվել է մի անձնավորություն, ում անվան հետ միջազգային նշանակության եւ երկրի համար կենսական իրադարձություններ են առնչվում: Մասնավորապես, նրա անվան հետ է առնչվում երկրի համար այնպիսի նշանակալի նախագծի իրականացումը, ինչպիսին էր Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը:

Խորին ցավակցություն եմ հայտնում հանգուցյալի հարազատներին»:

Վրաստանի նախկին նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հուղարկավորությունը կկայանա հուլիսի 13-ին, Թբիլիսիում:

Շեւարդնաձեի հուղարկավորման ամսաթվի մասին որոշումն ընդունել է նրա ընտանիքը՝ համաձայնեցնելով նախկին նախագահի հուղարկավորության կազմակերպման պետական հանձնաժողովի անդամների հետ:

Վրաստանի նախկին նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի մահվան կապակցությամբ, հուլիսի 8-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը հրավերներ է հղել արտասահմանյան երկրներ: Այս մասին հայտարարեց արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն:

Էդուարդ Շեւարդնաձեն ծնվել է 1928 թվականի հունվարի 25-ին, Լանչխութիի շրջանի Մամաթի գյուղում: 1959 թվականին հեռակա ավարտել է Քութայիսիի Ա.Ծուլուկիձեի անվան մանկավարժական ինստիտուտը: 1972-86 թվականներին եղել է Վրաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարը, 1985-90 թվականներին Խորհրդային Միության արտաքին գործերի նախարարը: Խորհրդային Միության փլուզումից հետո, վերադարձել է Վրաստան եւ, 1995 թվականի նախագահական ընտրություններին՝ ընտրողների 74 տոկոսի աջակցությամբ, ընտրվել երկրի ղեկավար: 1980 թվականի նախագահական ընտրություններին՝ ընտրողների 82 տոկոսի քվեներով, վերընտրվել է երկրի նախագահի պաշտոնում: Պաշտոնից վաղաժամկետ հրաժարական է տվել 2003 թվականին, վարդերի հեղափոխության արդյունքում:

Նախագահի պաշտոնում եղած ժամանակ, էդուարդ Շեւարդնաձեի դեմ երեք անգամ կազմակերպվել է մահափորձ. 1992 թվականին Աբխազիայում, 1995 թվականին՝ Վրաստանի խորհրդարանի բակում եւ 1998 թվականին՝ նախագահական նստավայրի ճանապարհին:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏԻՎՆԵՐ՝ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Վրաստանի նախկին նախագահ էդուարդ Շեւարդնաձեի մահվան կապակցությամբ, նախ Կրծանիսիի նստավայրում, ապա՝ Սուրբ Երրորդության տաճարում, նաեւ Վրաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ ունեցող աշխարհի տարբեր երկրներում գործող Վրաստանի դեսպանություններում կբացվեն սգո մատյաններ:

Էդուարդ Շեւարդնաձեն կթաղվի զինվորական պատիվներով, իսկ հուլիսի 13-ին՝ հուղակավորության օրը, կխոնարհվեն պետական դրոշներն ինչպես ողջ Վրաստանում, այնպես էլ՝ երկրի դեսպանատներում:

Էդուարդ Շեւարդնաձեի կտակի համաձայն, Շեւարդնաձեի ընտանիքի կողմից ընդունած որոշմամբ, էդուարդ Շեւարդնաձեն կհուղարկավորվի Կրծանիսիի նստավայրի բակում, իր տիկնոջ՝ Նանուլի Շեւարդնաձեի գերեզմանի կողքին:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԳՈՐԾԱԴԻՐ

ՔՆՆԱՐԿՎԵՑ ԵՆԹԱԿԱՌՈՒՑԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Հուլիսի 8-ին Վրաստանի ֆինանսների նախարարությունում կայացավ աշխատանքային հանդիպում, որին մասնակցում էին ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Էլգուջա Խոկրիշվիլին, մշակույթի նախարար Գուրամ Օդիշարիան, ինչպես նաեւ Սամեգրելո-Զեմո Սվանեթիի նահանգապետ Լեւան Շոնիան:

Նախարարներն ի գիտություն ընդունեցին համապատասխան ծառայությունների ղեկավարների տեղեկատվությունն այն մասին, թե ինչպես է ընթանում մրցութային առաջարկությունների նախապատրաստումը, իրականացման որ փուլում են գտնվում տարածաշրջաններում ենթակառույցների վերականգնման, այդ թվում՝ մշակութային ժառանգության հուշարձանների կարգավորման նախագծերի աշխատանքը:

Ինչպես նշվեց հանդիպմանը, կառավարության համար առաջնահերթային է ենթակառուցային նախագծերի իրականացումը, ինչը անմիջական ազդեցություն կգործի տնտեսական աճի, նոր աշխատատեղերի ստեղծման, տարածաշրջաններում զբոսաշրջիկների հոսքի ավելացման եւ բնակչության տնտեսական վիճակի բարելավման վրա:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՐԵԼ ԵՆ ՎՃԱՐԵԼ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) հուլիսի 3-ին որոշել է, որ 2006 թվականին Ռուսաստանից Վրաստանի քաղաքացիների արտաքսումը կրել է համակարգային բնույթ, եւ Ռուսաստանին պարտավորեցրել փոխհատուցում վճարել տուժածներին:

Ընդ որում, փոխհատուցման չափը պետք է որոշվի բանակցությունների միջոցով՝ 12 ամսվա ընթացքում:

Ռուսաստանի դեմ Վրաստանի միջպետական հայցը Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ներկայացվել 2007 թվականի մարտի 26-ին, «Ռուսաստանի Դաշնության տարածքում Վրաստանի քաղաքացիների հետապնդման» առնչությամբ: Խոսքը վերաբերում է Եվրակոնվենցիայի մի ամբողջ շարք նորմաների խախտմանը 2006 թվականին էթնիկ վրացիների զանգվածային արտաքսման ընթացքում: Եվրադատարանը Ռուսաստանի դեմ Վրաստանի հայցը թույլատրելի էր ճանաչել 2009 թվականի հունիսի 30-ին եւ, ելնելով գործի կարեւորությունից, այն հանձնել էր դատարանի Մեծ պալատին:

ՔՆՆԱՐԿՎԵԾԻՆ ԱՌԵՎՏՐԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Հուլիսի 10-ին կայացավ վրաց-ռուսական հարաբերություններում Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեի հանդիպումը Ռուսաստանի ԱԳ փոխնախարար Գրիգորի Կարասինի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին առեւտրա-տնտեսական, տրանսպորտային եւ հումանիտար-մշակութային հարցեր: Հանդիպմանը նշվեց, որ 2012 թվականի վերջերից սկսված երկկողմ ոչ պաշտոնական երկխոսությունն արդեն հանգեցրել է գործնական մի շարք արդյունքների: Մասնավորապես, վերացվել են առեւտրական եւ տրանսպորտային հարաբերություններում ներդրված արգելքները, անցյալ տարի առեւտրաշրջանառությունն աճել է 50 տոկոսով: Ինչպես նշվեց հանդիպմանը, վերոնշյալ ուղղության պահպանմանը կնպաստի Դարիալի կիրճով ավտոմոբիլային հաղորդակցության վերականգնումը:

Հանդիպմանը քննարկվեց նաեւ Եվրամիության հետ Վրաստանի Ասոցիացման համաձայնագրի թեման: Մասնավորապես, խոսվեց այն մասին, թե այն ինչ ազդեցություն կարող է գործել վրաց-ռուսական առեւտրատնտեսական հարաբերությունների վրա: Զուրաբ Աբաշիձեն կրկին հաստատեց Վրաստանի դիրքորոշումը, որ Ասոցիացման համաձայնագիրը ոչ մի արգելք չի հարուցում Ռուսաստանի եւ հարեւան մյուս երկրների հետ առեւտրատնտեսական, փոխշահավետ, նորմալ հարաբերությունների զարգացմանը:

Կողմերը պայմանավորվեցին հաջորդ հանդիպումն անցկացնել նոյեմբերին:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՆԵՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ ԼՐԱԳՐՈՂ ԶՎԻԱԴ ՔՈՐԻՁԵՆ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, լրագրող Զվիադ Քորիձեին ներկայացնելով ներման հանձնաժողովի նախագահի պաշտոնում, հայտարարեց, որ ներման հանձնաժողովի գլխավոր խնդիրը հումանիզմի սկզբունքների ներդրումն է:

«Անցյալ տարվա նոյեմբերից Զվիադ Քորիձեն աշխատում էր որպես հանձնաժողովի նախագահ, եւ ես ցանկանում եմ նրան շնորհակալություն հայտնել նախագահի պաշտոնին համաձայնելու կապակցությամբ: Առանձնակի երախտագիտություն եմ ցանկանում հայտնել Ալեկո Էլիսաշվիլուն, քանի որ նա մի քանի ամիս շարունակ բարդ աշխատանք իրականացրեց: Կրկին անգամ նրան շնորհավորում եմ ընտրություններում հաղթանակի կապակցությամբ, իսկ Զվիադ Քորիձեին մաղթում հաջողություններ գործունեության նոր ասպարեզում»,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

ԴԱՏԱՐԱՆԸ ԲԱՎԱՐԱՐԵՑ ԳԻԳԻ ՈՒԳՈՒԼԱՎԱՅԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱԼԱՆՔԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԸ

Թբիլիսիի քաղաքային դատարանը որոշում ընդունեց Թբիլիսիի նախկին քաղաքապետ Գիգի Ուգուլավայի երկամսյա նախնական կալանքի վերաբերյալ:

Դրանով դատարանը բավարարեց դատախազության պահանջը: Մինչ այդ, գրեթե հինգ ժամ դատարանի դահլիճում մեղադրող եւ պաշտպանող կողմերը ներկայացնում էին իրենց փաստարկները: Պաշտպանությունը գտնում է, որ դատավարությունը քաղաքականացված է, քանի որ իշխանություններն Ուգուլավայի ձերբակալությամբ փորձում են թուլացնել գլխավոր ընդդիմադիր ուժը՝ «Միասնական ազգային շարժումը»:

Պաշտպանությունը մտադիր է բողոքարկել քաղաքային դատարանի որոշումը:

Նշենք, որ Գիգի Ուգուլավան մեղադրվում է չորս տարբեր գործերով՝ 50 միլիոն լարիի յուրացման «Իմեդի» հեռուստաընկերության եւ Ռիղեի տարածքի ապօրինի սեփականաշնորհման, ինչպես նաեւ կուսակցության կարիքների համար փողերի լվացման ու ընտրական վարչակազմի վրա ճնշում գործադրելու համար:

Թբիլիսիի բողոքարկման դատարանը հրաժարվեց քննարկել Թբիլիսիի նախկին քաղաքապետ Գիգի Ուգուլավայի հայտը, ըստ որի, վերջինս իր նախնական կալանքի մասին որոշումը համարում է ապօրինի:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ՊԵՏԸ

Հոլանդիայում ձերբակալվել է Վրաստանի զինված ուժերի միացյալ շտաբի ռազմական ոստիկանության անվտանգության եւ հատուկ առաջադրանքների դեպարտամենտի գլխավոր վարչության նախկին պետ Գիորգի Դղեբուաձեն:

Այդ մասին հաղորդել է Վրաստանի գլխավոր դատախազությունը:

Ներկա փուլում աշխատանքներ են տարվում նրան Վրաստան արտահանձնելու հարցի շուրջ:

«Գիորգի Դղեբուաձեն Հոլանդիայի իրավապահ մարմինների կողմից ձերբակալվել է Վրաստանի գլխավոր դատախազության խնդրանքով: Նրա արտահանձնումը կազմակերպելու աշխատանքներ են կատարվում»,- նշեց գլխավոր դատախազության ներկայացուցիչ Թեմուր Դոլիձեն:

Վրաստանի գլխավոր դատախազությունը 2013 թվականի մարտի 7-ին Գիորգի Դղեբուաձեին, որը հայտնի է նաեւ «Վարպետ» անունով, մեղադրանքներ էր առաջադրել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, անօրինականորեն ազատությունից զրկելու եւ կտտանքներ կազմակերպելու մեջ:



ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՖԱՇՎԻԼԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին հուլիսի 6-ին պաշտոնական այցով մեկնեց Բաքու:

Այցի շրջանակներում, Վրաստանի խորհրդարանի խոսնակը հանդիպումներ ունեցավ Ադրբեջանի Միլի մեջլիսի նախագահ Օգթայ Ասադովի, Ադրբեջան-Վրաստան բարեկամության միջխորհրդարանական խմբի անդամների, վարչապետ Արթուր Ռասիզադեի, արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդյարովի հետ:

Հուլիսի 8-ին կայացավ Դավիթ Ուսուփաշվիլու հանդիպումը Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Բաքվում կայացած հանդիպումներում կողմերը քննարկեցին վրաց-ադրբեջանական երկկողմ հարաբերությունների հարցերը, անդրադարձ կատարեցին համագործակցության խորացման հեռանկարներին, քննարկեցին տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցեր:

ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ

Հուլիսի 14-ին կանցկացվի Թբիլիսիի նորընտիր սակրեբուլոյի անդրանիկ նիստը:

Օրենսդրության համաձայն, սակրեբուլոյի նախկին կազմը լիազորությունները վայր է դնելու նորընտիր կազմի անդրանիկ նիստից հետո:

Հիշեցնենք, որ ընտրությունների արդյունքում, Թբիլիսիի սակրեբուլոյում մանդատներ են ստացել կառավարող «Վրացական երազանք» կոալիցիան, «Միասնական ազգային շարժումը», «Նինո Բուրջանաձե-միասնական ընդդիմությունը» եւ «Վրաստանի հայրենասերների ալյանսը»: Սակրեբուլոյի 50 պատգամավորներից 25-ն ընտրվել են համամասնական, մյուս 25-ը՝ մեծամասնական ընտրակարգով: Նոր սակրեբուլոյում «Վրացական երազանքը» ստացել է 37 մանդատ (13-ը՝ համամասնական եւ 24-ը՝ մեծամասնական), «Միասնական ազգային շարժումը»՝ 7, Նինո Բուրջանաձեի գլխավորած դաշինքը՝ 3 եւ Հայրենասերների միությունը՝ 2 մանդատ:

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ՝ «ԹՈՔ-ՇՈՈՒ»-Ի ՀԱՂՈՐԴԱՎԱ՞Ր

Մոտ ժամանակներս Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին GDS հեռուստաեթերում կվարի հասարակական, կրթական նոր թոք-շոու:

Ինչպես տեղեկացրել է հեռուստաընկերության ղեկավարությունը, հաղորդման հեղինակը եւ միաժամանակ վարողն անմիջականորեն լինելու է Բիձինա Իվանիշվիլին: Հեռուստաընկերության հայտարարության համաձայն, հանրակրթական նոր թոք-շոուն եթեր կարձակվի ընթացիկ տարվա հոկտեմբերին:

«ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Խորին շնորհակալություն ենք հայտնում ձեր թերթում մեր պարբերականի գլխավոր խմբագիր Սուլեյման Սուլեյմանովի մահվան կապակցությամբ հրապարակած մահախոսականի եւ մյուս տեղեկատվությունների համար:

Հուսով ենք, որ մեր ավանդական բարի ավանդույթը, ուրախության եւ ցավի ժամանակ միմյանց աջակցելը առաջիկայում էլ կշարունակվի եւ կփոխանցվի սերունդներին: Դրանում կրկին անգամ համոզվեցինք մեզ համար ծանր րոպեներին, մեզ համար թանկագին Սուլեյման Սուլեյմանովի հուղարկավորության օրը: Կրկին անգամ մեր թերթի աշխատակիցների երախտագիտությունն ենք հայտնում ձեր կողմից ցուցաբերած հոգատարության ու աջակցության համար, մաղթում երջանկություն, կովկասյան երկարակեցություն եւ ստեղծագործական հաջողություններ՝ լրագրողի բարդ ասպարեզում:

Խորին հարգանքներով եւ բարի մաղթանքներով՝ «Գյուրջիստան» թերթի կոլեկտիվ

ՀԵՌԱՆԿԱՐ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ

Մանկավարժների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնում անցկացվեց ուսուցչի մասնագիտական չափորոշման ուղեցույցի շնորհանդեսը:

Չափորոշիչները սահմանված են՝ ելնելով այն պահանջներից, որոնց բավարարելու է մանկավարժը: Դրանք հիմնականում կապված են այնպիսի նշանակալից փաստաթղթերի հետ, ինչպիսիք են ազգային ուսումնական ծրագիրն ու ազգային կրթության ընդհանուր նպատակները: Մասնագիտական չափորոշիչների հիման վրա կատարելագործվում են մանկավարժների նախապատրաստման եւ վերապատրաստման ծրագրերը, ներդրվում ուսուցչի աշխատանքի գնահատման նոր մեթոդներ, կանխագծվում են մասնագիտական զարգացման միջոցներն ու մեթոդները:

Մանկավարժների մասնագիտական չափորոշիչները հաստատվել էին 2008 թվականին, սակայն ժամանակի ընթացքում դրանցում ծագեց նոր մարտահրավերների կապակցությամբ որոշակի ուղղումներ կատարելու անհրաժեշտություն: Ուղղումներից մեկն առնչվում է ուսուցիչների որակավորման չորս տարբեր կատեգորիաների բաժանմանը, ինչը դրված է մասնագիտական զարգացման սխեմայի նոր տարբերակի հիմքում:

ԱՍՈՅԻԱՅՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԸՆՁԵՌՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն գերատեսչությունում հրավիրված մամլո ասուլիսում, ողջունելով Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրման փաստը, նշեց, որ Վրաստանի առջեւ բացվում են նոր հնարավորություններ, եւ երկրի համար սկսվում է զարգացման նոր փուլ:

Անդրադառնալով հանրակրթական ոլորտի Ասոցիացման համաձայնագրի շնորհիվ այդ բնագավառում ծագած հնարավորությունների թեմային՝ Թամար Սանիկիձեն նշեց. «Հանրակրթական ոլորտի համար Ասոցիացման համաձայնագիրն առանձնակի նշանակություն ունի, այն նախատեսում է ինտեգրում միասնական եվրոպական հանրակրթական եւ հետազոտական տարածքին, ուսանողների ու ակադեմիական փոխանակումների ծրագրերի կտրուկ աճ, որակավորման եւ մասնագիտական իրավասության ավելացում, մասնագիտական զարգացման ու որակի ապահովման համապատասխանեցում»: Նախարարի խոսքերով, այս ամենը մի կողմից նշանակալի մարտահրավերներ են, մյուս կողմից՝ իրատեսական հնարավորություններ: «Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը, ելնելով կրթության հանձնարարականներից, մշակել է կրթության ու գիտության զարգացման երկարաժամկետ համընդգրկուն ռազմավարություն, կոնկրետ քայլեր է իրականացրել եւ նախապատրաստական աշխատանքներ կատարել վերոնշյալ նպատակներին հասնելու համար:

Պատրաստ ենք մեր բաժինը ներդնել Վրաստանի եվրոպական անշրջելի զարգացման գործում»,- հայտարարեց կրթության նախարար Թամար Սանիկիձեն:

ԿՈՒՍՈՒՑԱՆԵՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հայտնի են դարձել կրթության միջազգային կենտրոնի մրցույթի հաղթողները, ովքեր ցանկություն են հայտնել ստանալ մագիստրատուրայի եւ դոկտորանտուրայի ծրագրերով սովորելու ֆինանսավորում:

Կենտրոնի ֆինանսավորում կստանա 78 ուսանող, որից 49-ը ուսուցանելու են մագիստրատուրայի, իսկ 13-ը՝ դոկտորանտուրայի ծրագրով: Նշենք նաեւ, որ ֆինանսավորում կստանա 16 կրթաթոշակառու, ով դեռեւս անցյալ տարի ստացել էր ընթացիկ գրանտ:

Կրթաթոշակների բաշխման ընթացքում գերակայությունը տրվում էր ինժեներա-տեխնոլոգիական եւ սոցիալական ուղղություններին, ինչպես նաեւ ճշգրիտ ու բնական գիտություններին: Նաեւ ֆինանսավորվեցին մրցույթի իրավունքի 5, բիզնեսի՝ 5, մշակույթի ոլորտի՝ 7, առողջապահության՝ 2 եւ կրթության ուղղությամբ՝ 1 մասնակից:

Ուսուցումն ավարտելուց եւ հայրենիք վերադառնալուց հետո, ուսանողները կկարողանան ստացած գիտելիքները իրացնել հանրային ծառայությունում:

Հուլիսի 9-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ ուսանողների հետ: Իր ելույթում նա պետական օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն հայտնեց շնորհալի ուսանողներին:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ

Քննությունների եւ գնահատման կենտրոնի ղեկավարությունը դիմորդներին զգուշացնում է, որ պաշտոնական տեղեկատվության ստացման համար դիմեն միայն կազմակերպության պաշտոնական կայքին www.naec.ge: Ինչպես նշված է հայտարարության մեջ, դիմորդներին թյուրիմացության մեջ գցելու նպատակով, ինտերնետ տարածքում տարածվում է սխալ տեղեկատվություն: «Մասնավորապես, կազմվել էր էջ-կրկնօրինակ: Իրավիճակի պարզեցման նպատակով, կենտրոնի ղեկավարությունն արդեն դիմել է համապատասխան գերատեսչություններին: Ընդունելության քննությունների անցկացման մասին տեղեկատվության համար, անհրաժեշտ է դիմել միայն քննությունների եւ գնահատման ազգային կենտրոնի պաշտոնական կայք-էջին»,- ասված է կենտրոնի հայտարարության մեջ:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

10 ԱՌԱՍՊԵԼ՝ ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՍՈՅԻԱՅՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

ԱՌԱՍՊԵԼ 6. Ասոցիացման համաձայնագրի իրականացումը վտանգ է ներկայացնում ուղղափառությանը, ինչպես նաեւ կնվազի վրաց ուղղափառ եկեղեցու դերը:

Ճշմարիտ է. Ասոցիացման համաձայնագրի ստորագրումը եւ նրա իրականացումը վտանգ չի ներկայացնում ինչպես վրաց ուղղափառ եկեղեցուն, այնպես էլ՝ Վրաստանի ուղղափառ բնակչությանը:

Եվրամիությունում անդամագրված են ուղղափառ աշխարհի այնպիսի կարեւոր երկրներ, ինչպիսիք են Հունաստանը, Կիպրոսը, Ռումինիան, Բուլղարիան: Դրա հետ մեկտեղ, Եվրամիությանն անդամագրվելու թեկնածու երկրի՝ Սերբիայի բնակչության մեծ մասը ուղղափառ է: Համապատասխանաբար, Եվրամիությանը անդամագրումը վերոնշյալ երկրների ուղղափառ եկեղեցու համար, ինչպես նաեւ Եվրամիության անդամ եւ թեկնածու երկրների ուղղափառ բնակչության համար որեւէ վտանգ չի ստեղծել: Եթե վերոնշյալ երկրներում չի առաջացել նման խնդիր, ինչո՞ւ պետք է Վրաստանը բացառություն կազմի:

ԱՌԱՍՊԵԼ 7. Ասոցիացման համաձայնագիրը կստիպի Վրաստանին թույլ տալ միասեռականների ամուսնություն:

Ճշմարիտ է. Եվրամիությունը Վրաստանից չի պահանջում միասեռականների ամուսնության օրինականացում: Եվրամիության մեծ մասը կազմող երկրներում թույլատրված չէ միասեռականների ամուսնությունը: Միասեռականների ամուսնությունը չի ներկայացնում Եվրամիությանը անդամագրվելու պահանջ եւ որեւէ առնչություն չունի Եվրամիության օրենսդրության հետ:

Եվրամիության անդամ երկրներն ունեն տարբեր տեսլականներ այս հարցի կապակցությամբ: Ընդամենը մի քանի երկիր է ընդունում միասեռականների ամուսնությունը, իսկ մեծ մասը (Կիպրոս, Էստոնիա, Հունաստան, Մալթա, Ռումինիա, Սլովակիա) չի ընդունում, եւ ավելին՝ որոշ երկրներում Սահմանադրությամբ արգելված է (Բուլղարիա, Խորվաթիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան):

ԱՌԱՍՊԵԼ 8. Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագիրը կխանգարի Վրաստանին ունենալ ազատ առեւտուր այլ երկրների հետ:

Ճշմարիտ է. Եթե Վրաստանը ցանկանում է պահպանել ազատ առեւտրային հարաբերություններ այլ երկրների հետ, այդ թվում՝ Անկախ պետությունների համագործակցության երկրների, դա հնարավոր է Եվրամիության հետ ազատ առեւտրային միջավայր ստեղծելուց հետո եւս: Դրա հետ մեկտեղ, Վրաստանը կրկին հնարավորություն ունի սահմանել սեփական առեւտրային քաղաքականություն:

Այն երկրները, որոնք ստորագրել են Եվրամիության հետ ազատ առեւտրի համաձայնագիրը, կարող են ցանկացած այլ երկրի հետ ստորագրել նմանատիպ համաձայնագիր: Կողմերը ազատ կարող են միեւնույն ժամանակ ստորագրել մի քանի ազատ առեւտրի համաձայնագիր եւ իրականացնել անկախ առեւտրային քաղաքականություն: Եվրամիությունն ունի ազատ առեւտրային համաձայնության բավականին ծավալուն ցանց:

Այժմ, Եվրամիությունը առեւտրային համաձայնության վերաբերյալ բանակցություններ է վարում Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ճապոնիայի, Հնդկաստանի եւ այլ երկրների հետ: Եվրամիությունն աջակցում է նաեւ Վրաստանին պահպանել ու զարգացնել առեւտրային համագործակցությունն այլ երկրների հետ, քանի որ տնտեսական միությունները կարեւոր են Վրաստանի համար եւ չեն խանգարում Վրաստան-Եվրամիություն առեւտրային հարաբերություններին:

Չնայած, որ Ասոցիացման մասին համաձայնագրի ստորագրումից հետո Վրաստանը կարող է ունենալ ազատ առեւտրային հարաբերություններ այլ երկրների հետ, Վրաստանը չի կարող դառնալ ցանկացած այլ երկրների մասնակցությամբ ստեղծված Մաքսային միության անդամ: Մաքսային միությանը (օրինակ՝ Ռուսաստանի կողմից ստեղծված Մաքսային միություն) անդամագրվելու դեպքում, Վրաստանը ստիպված կլինի իրականացնել այն միության որոշումների համապատասխան առեւտրային քաղաքականություն եւ սահմանել նրա մաքսային սակագները, որը անհնար է դարձնում Եվրամիության հետ ազատ առեւտրի երկկողմ համաձայնության գոյությունը: Բացի այդ, ցանկացած Մաքսային միությանը անդամագրվելու դեպքում, հնարավոր է՝ Վրաստանը ստիպված լինի փոխհատուցել համաշխարհային առեւտրական կազմակերպության այն անդամ երկրներին, որոնց վրա բացասաբար կանդրադառնան նշված փոփոխությունները՝ Վրաստան ներմուծում իրականացնելիս:

ԱՌԱՍՊԵԼ 9. Եթե Ասոցիացման համաձայնագիրը ստորագրվի, ապա, Եվրամիության չափանիշները ներդնելուց հետո, կխանգարվի Վրաստանի ապրանքների արտահանումը այլ երկրներ, ինչպես նաեւ այլ երկրների ընկերությունների հետ համագործակցությունը:

Ճշմարիտ է. Եվրամիության ընկերությունների համար Եվրամիության չափորոշիչները այլ երկրներ արտահանում իրականացնելու կամ այլ ընկերությունների հետ համագործակցելու համար խոչընդոտ չեն ներկայացնում: Ուրեմն, ինչու պետք է խնդիրներ առաջանան վրացական ընկերությունների մոտ: Վրացական ընկերությունները, որոնք իրականացնում են արտահանում այլ երկրների շուկաներ եւ համագործակցում այլ ընկերությունների հետ, դա կկարողանան անել Ասոցիացման համաձայնագիրը ստորագրելուց հետո եւս (եթե քաղաքական մոտիվացիաներով չիրականացվեն արգելքներ եւ սահմանափակումներ):

Եվրամիության չափանիշները դյուրացնում են այլ երկրների չափանիշների բավարարումը: Ներդրումները, որոնք հարկավոր են Վրաստանի հնացած գործարանների արդիականացման համար, չեն կորչի: Վրացական ընկերությունները, որոնք ապրանք են արտադրում այլ երկրների շուկաների համար, Ասոցիացման համաձայնագրի իրականացումից հետո եւս կկարողանան շարունակել արտադրումը: Հիմնական փոփոխությունը կվերաբերի ներքին արտադրությանը: Վրացական ընկերությունները պետք է ապահովեն արտադրման արդիականացումը, որպեսզի ապրանքը համապատասխանի Եվրամիության չափանիշներին: Սակայն, դա չի գործի այն ապրանքի վրա, որը արտադրվում է միայն այլ երկրներ շուկա արտահանելու համար: Վրաստանի բնակչության համար Եվրամիության չափանիշների ներդրումը կբարելավի ոչ միայն ներքին արտադրության ապրանքի որակը եւ կապահովի Եվրամիության շուկայի մատչելիությունը, այլ նաեւ կավելացնի վրացական ապրանքի մրցունակությունը այլ միջազգային շուկաներում (ԱՄՆ, Չինաստան, Մերձավոր Արեւելք):

ԱՌԱՍՊԵԼ 10. Ասոցիացման համաձայնագրի արդյունավետ իրականացման արդյունքում, Եվրամիությանը անդամագրվելու ցանկության դեպքում, Վրաստանի կառավարությունը ստիպված կլինի հրաժարվել բռնազավթված տարածաշրջանները հետ վերադարձնելուց:

Ճշմարիտ է. Ասոցիացման համաձայնագրի արդյունավետ իրականացումից հետո, Վրաստանի կողմից Եվրամիություն անդամագրվելու դիմում ներկայացնելը կապ չունի բռնազավթված տարածաշրջանները հետ վերադարձնելուց հրաժարվելու հետ:

Ասոցիացման համաձայնագրում հասկանալի կերպով նշված է, որ Եվրամիությունը հարգում է Վրաստանի տարածքային ամբողջականությունն ու ինքնավարությունը՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում: Համաձայնագիրը հաշվի է առնում նաեւ Եվրամիության առավել ակտիվ ներգրավումը հակամարտության խաղաղ լուծման գործընթացում: Ասոցիացման համաձայնագրի արդյունավետ իրականացման եւ Եվրամիության անդամ դառնալու համար Վրաստանի կողմից դիմում ներկայացնելու դեպքում, գոյություն չունի ոչ մի հիմք, որ Եվրամիությունը փոխի վերոնշյալ վերաբերմունքը Վրաստանի տարածքային ամբողջականության նկատմամբ եւ, համապատասխանաբար, անդամակցության փոխարեն, Վրաստանը ստիպված լինի հրաժարվել բռնազավթված տարածաշրջանները հետ վերադարձնելուց: